

ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող Ենգիդունյան Վահան Վարդանի՝ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)» ատենախոսության վերաբերյալ պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Վահան Վարդանի Ենգիդունյանի ատենախոսությունը նվիրված է Հայաստանում 2011թ.-ին սկիզբն առած և մինչ այժմ շարունակվող համայնքների խոշորացման գործընթացների սոցիալական հետևանքների սոցիոլոգիական վերախմաստավորմանը, գնահատմանն ու մեկնաբանմանը: Հեղինակն իր վերլուծությունն իրականացնում է տարածքային կառավարման գործընթացները կապելով սոցիալ-տարածական պրակտիկաների հետ, ինչն ինքնին նորարար մոտեցում է այս ոլորտի գործընթացները վերլուծման գործում, քանզի արդի գրականության մեջ սովորաբար տարածքային կառավարումը և սոցիալ-տարածական պրակտիկաները դիտարկվում են անկախ մեկը մյուսից:

Սույն թեմային առնչվող միջազգային գրականության մեջ առկա են ուսումնասիրություններ մունիցիպալ միավորումների, տեղական ինքնակառավարման, տարածական պլանավորման (municipal amalgamation, local governance, spatial planning) վերաբերյալ, որտեղ հիմնականում վերլուծվում են վարչական բարեփոխումները, դրանց արդյունավետությունը, քաղաքացիների մասնակցության և ինքնության վրա ազդեցությունը: Տարածության սոցիոլոգիայում (օրինակ՝ Լեֆերի, Սոյի, Հաբերմախ, Հարվիի մոտ) կան բազմաթիվ աշխատանքներ այն մասին, թե ինչպես է տարածքը կառուցվում իշխանության և բնակչության գործելակերպերի միջոցով: Հետխորհրդային համատեքստում առկա են ուսումնասիրություններ տեղական ինքնակառավարման բարեփոխումների վերաբերյալ (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Հայաստան), բայց դրանք հիմնականում կենտրոնացած են ինստիտուցիոնալ և իրավական ասպեկտների, երբեմն՝ մասնակցության հարցերի վրա:

Այս աշխատանքում կապվում են սոցիալ-տարածական գործելակերպերը (առօրյա կյանքը, ինքնությունը, տարածքի օգտագործումը) ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ (համայնքների խոշորացում, սահմանների փոփոխություն, լիազորությունների վերաբաշխում), ինչը պայմանավորում է սույն աշխատանքի արժեքը և նորույթը: Տվյալ մոտեցման համաձայն համայնքների համախմբումը և տարածքային կառավարումը դիտարկվում են սոցիալ-տարածական գործելակերպերի (պլանավորման, կազմակերպման, վերահսկողության, բնակիչների առօրյա պրակտիկաների) համատեքստում, ինչը հանդիսանում է նոր հետազոտական հեռանկար: Հեղինակն իր վերլուծությունը կենտրոնացնում է սոցիալական տարածության (social space) և նրա վերարտադրության մեխանիզմների վրա, այդ տարածության անբաժան մասի՝ սոցիալական տարածքի (social territory) կառավարման և վերափոխման համատեքստում: Այդ խնդրի արդիականությունն ու կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես նրանով, որ տարածքային կառավարման բարեփոխումները Հայաստանում կատալիզացնում են սոցիալ-տարածական լուրջ փոփոխությունները: Ըստ էության, տարածքային կառավարումը դրսևորվում է ոչ միայն որպես ինստիտուցիոնալ կանոններ և դրանց համապատասխանող գործընթացներ, այլև որպես առօրյա, սոցիալական հարաբերություններում արմատավորված գործելակերպեր, որոնք ազդում են բնակիչների, տեղական համայնքների և իշխանությունների վրա: Ըստ այդմ, համայնքների խոշորացման գործընթացը պահանջում է կառավարման և հանրային մասնակցության նոր մոդելներ, ինչպես նաև այս գործընթացները վերլուծելու և հիմնավորելու համար՝ լուրջ գիտական հիմք:

Ատենախոսությունը բաղկացած է երկու գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին գլխում հեղինակը նկարագրում է տարածքային կառավարման կոնցեպտի տեսամեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև սոցիալական տարածության սուբյեկտիվ և ինտերսուբյեկտիվ իմաստավորումները, տարածության վերարտադրության մեխանիզմները, վերհանում է համայնքային խոշորացման՝ որպես տարածքային կառավարման պրակտիկայի սոցիալ-տարածականությունը: Երկրորդ գլուխը նվիրված է բուն հետազոտությանը, հետազոտական կոնցեպտների հայեցակարգային և օպերացիոնալ մոդելների կառուցմանը, հետազոտության արդյունքների վերլուծությանն ու մեկնաբանմանը: Հեղինակը ուսումնասիրում է սոցիալ-տարածական պլանավորումը, տարածական կազմակերպումն ու վերահսկումը, որպես ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման բաղադրիչներ և

վերհանում է դրանք, որպես տարածքային կառավարման վերաբերյալ հանրային ընկալումները պայմանավորող գործոններ:

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտված խնդիրների արդիականությամբ, խնդրին վերաբերող լայնածավալ հետազոտական և տեսամեթոդաբանական նյութերի ուսումնասիրություններով, ինչպես նաև բարդ և բազմակողմանի վիճակագրական ապարատի կիրառմամբ:

Դրա հետ մեկտեղ աշխատանքը գերծ չէ մի շարք թերություններից և վիճահարույց հարցադրումներից:

1. Ատենախոսության հիմնական թերություններից կարելի է նշել շարադրման ծանրամատչելի լեզուն, հաճախ հանդիպող անորոշություն մտքերի ձևակերպման մեջ, ոչ հստակ սահմանված հասկացություններ, ինչը հաճախ հանգեցնում է շփոթության և անորոշությանը: Մասնավորապես՝

- Մի կողմից հեղինակը որպես հետազոտության առարկա սահմանում է *«տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները»*, որոնց հստակ սահմանված ձևակերպումը բացակայում է: Ատենախոսության էջ 27-ում հեղինակը ներկայացնում է *«տարածքային կառավարումը՝ որպես պրակտիկա»*, իսկ էջ 121-ում ներկայացնում է տարածքային կառավարման երեք բաղադրիչները՝ որպես սոցիալ-տարածական պրակտիկաներ: Ըստ այդմ, շփոթումն է առաջանում այն հարցում, թե կոնկրետ ո՞րն է հետազոտության առարկան և ինչպե՞ս է այն սահմանվում:
- Այս հարցի հետ կապված, էջ 121 հեղինակը 2.4 Ենթագլխի վերնագիրը ձևակերպում է հետևյալ կերպ. *«Սոցիալ-տարածական պրակտիկաների հանրային ընկալումներ չհ խոշորացված համայնքներում»*, որտեղ ուսումնասիրում է *«բնակչության շրջանում համայնքային խոշորացման ազդեցության վերաբերյալ ընկալումները»* և *«բնակչության բնակավայրերում իրականացվող փոփոխություններում մասնակցության ցանկության հավանականությունը»* (Մեղմագրի էջ 14): Տվյալ դեպքում հասկանալի չէ, թե որո՞նք են այն սոցիալ-տարածական պրակտիկաները, որոնց վերաբերյալ ուսումնասիրվում են բնակչության ընկալումները:
- Հեղինակը պնդում է, որ *սոցիալ-տարածական պլանավորումը* բաղկացած է երկու բաղադրիչներից, այն է՝ *«տեղի զգացում»* և *«սոցիալական կայունություն»* (էջ 77): Հարց է առաջանում, արդյոք այդ ցուցանիշները հանդիսանում են

պլանավորման *բաղադրիչներ*, թե՛ որանք *գործոններ* են, որոնք ազդում են պլանավորման արդյունավետության վրա, քանի որ պլանավորումն ինքնին նշանակում է «*ապագայում որոշակի նպատակներին հասնելու մեխանիզմների, գործիքների և ռազմավարությունների մշակում*», և սերտորեն կապված է **ապագա** կոնցեպտի հետ:

- Խնդրահարույց է էջ 50-ում ներկայացրած տարածքային կառավարման սահմանումը («*տարածքային կառավարումը տարածքի օգտագործման և զարգացման պլանավորման, կազմակերպման և վերահսկման գործընթաց է, որը ներառում է տարբեր ռազմավարություններ, քաղաքականություններ և գործողություններ, որոնք իրականացվում են պետական կառավարման/ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և համայնքի ներկայացուցիչների կողմից՝ ապահովելու բնակեցված և ոչ բնակեցված վայրերի ռեսուրսների և ենթակառուցվածքների կայուն և արդյունավետ օգտագործումը սահմանված տարածքում*» (տե՛ս [144], էջ 82):»): Հարց է առաջանում, ո՞րն է այս սահմանման նորույթը և որո՞նք են կայունության և արդյունավետության չափանիշները: Դրա հետ կապված, հասկանալի չէ «*բազմաշափ խոցելիության*» սահմանումն ու չափանիշները (Սեդմագրի էջ 7-ում):
- Հեղինակը սահմանում է տարածական ներգրավվածությունը, որպես «*ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական ներգրավվածություն*» (էջ 33): Այդ դեպքում հասկանալի չէ 3-րդ լրացուցիչ վարկածում ի՞նչն է ստուգում հեղինակը, և հասկանալի չէ 2-րդ նորույթի էությունը:
- Նույնը վերաբերում է «տեղի զգացման» սահմանմանը, այսինքն՝ 4-րդ վարկածին և 3-րդ նորույթին:
- Քննելով պաշտպանությանը ներկայացված 6-րդ դրույթը (Սեդմագրի էջ 8), այն է. «*Բնակախմբերում իրականացվող փոփոխություններին մասնակցության ցանկությունը պայմանավորվում է տարածական ներգրավվածությամբ*», հարց է առաջանում, արդյոք փոփոխություններին մասնակցությունը չի՞ հանդիսանում տարածական ներգրավվածության բաղադրիչ: Այդ դեպքում պնդումը դառնում է ակնհայտ:

2. Ատենախոսության մեջ առկա է վերլուծության ֆորմալ մեթոդների կիրառման չարաշահում, որոնք հաճախ կորցնում են առողջ բանականությունն ու հետազոտական տրամաբանությունը: Որոշ դեպքերում ինդեքսների /ցուցիչների/

սանդղակների հաշվարկման վերաբերյալ հիմնավորված, հստակ ձևակերպված սահմանումները բացակայում են, ինչպես նաև սանդղակների կոնկրետ եղանակով չափման հիմնավորումները: Մասնավորապես.

- Էջ 126-ում նշված է, որ «տարածական ներգրավվածության» ցուցիչը հաշվարկվել է օրդինալ սանդղակների գումարման միջոցով և արվել է եզրակացություն, որ այն հարաբերությունների սանդղակ է, ինչը բավականին կասկածելի եզրահանգում է: Դրանից զատ հարց է առաջանում գումարելու գործողության օրինականությունն վերաբերյալ, քանի որ *ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական* ներգրավվածության միավորները տարբեր կշիռներ ունեն:
- Ինչո՞ւ կարելի է հետևյալ ինդիկատորը. «Որքանո՞վ եք բավարարված Ձեր բնակավայրի զարգացման քաղաքականություն մշակողների կողմից կատարած/կատարվող աշխատանքներից» համարել սոցիալական կապիտալի *կոզնիտիվ* չափում (էջ 95): Նման օրինակներում, որոնք բավականին հաճախ են հանդիպում, հարց է առաջանում. ի՞նչ տրամաբանությամբ են կառուցվել տվյալ ինդիկատորները:
- Ինչպե՞ս է հաշվարկվել լիդերության ցուցիչը և ինչպե՞ս կարելի է մեկնաբանել սույն սանդղակը, եթե հետազոտության մեջ կիրառվել են միայն բնակչության սուբյեկտիվ գնահատականները, ինչը հնարավոր չէ դիտարկել որպես օբյեկտիվ ցուցիչ:
- Ինչպե՞ս է հաշվարկվել սոցիալ-տնտեսական ցուցիչը և ինչպե՞ս է ստուգվել նրա հուսալիությունը:

3. Ատենախոսության առաջարկությունները բավականին ընդհանրական են ներկայացված, ցանկալի կլիներ, որ դրանք ավելի սերտ կապված լինեին և անմիջականորեն բխեին աշխատանքի կոնկրետ արդյունքներից:

Սակայն վերոնշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները: Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ կարծիքը, պետք է նշել, որ Վահան Վարդանի Ենգիդունյանի կողմից հեղինակած ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ և հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի հիմնական բովանդակությանը:

